

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՍՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ
ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԻ ԿԵՆԴՐԱՆԱԿԱՆ
ԶԱՐԴԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ**

Հայառնության հեղինակական ժամանակաշրջանի գունագարդ խեցեղենի ուսումնասիրությունը, լինելով զիտականորեն եռյժ կարևոր և անչափ եետաքրքիր, ի սկզբանե գրավել է ուսումնասիրողների սո սավար խմբի ուշադրությունը: Հասկապես կարեորվել է եարցի ծագումնաբանական կողմը, որը սաացել է աարբեր մեկնաբանություններ: Զգալի աշխատանք է ատրվել գունագարդ խեցեղենի առանձին ձևերի և զարդածների ուսումնասիրման քննազավառում: Գունագարդ խեցեղենի զարդապատկերները ըստ իրենց բնույթի կարելի է դասակարգել երեք եիմնական խմբերի՝ երկրաչափական, բուսական և կենդանական: Վերջինս գունագարդ խեցեղենի ուսումնասիրման քննազավառում ցարդ ներկայացվել է ընդհանուր – եասկանշական գծերով և առանձին ասումնադրման առարկու չի եղել՝ սլայամանավորված նյութի սակավությանը և մեծ մասամբ քնկորային վիճակով: Մինչ այժմ զիսական շրջանառության մեջ գունագարդ խեցեղենի կենդանական զարդապատկերների առկա եավաբածում ներկայացվել է 12 օրինակով: Այս եողվածում վերջինս եարստացվում է ևս 9 օրինակով՝:

Հալվածի սահմաններում նսլատակ է դրվում՝ ա) դասակարգել Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի գունացարդ խեցեղենի կենդանական զարդապատկերները, բ) դիտարկել դրանց գունագարդման առանձնաեակությունները, բուսական և երկրաչափական զարդապատկերների եեա վաիառնչությունները, գ) քննել Հայաստանի հարակից երկրների եամաժամանակյա և եամանման զարդապատկերների եեա սանչությունները, դ) պարզաբանել կենդանական զարդապատկերներով գունագարդ անոթների ֆունկցիոնալ նշանակությունը վերաբերող մի շարք եարցեր:

Զարդամոտիվների դասակարգման պարագայում հիմք է ընդունվել գունագարդ խեցեղենում քոչնակերպ և կենդանակերպ զարդապատկերների առկայությունը, որոնք ըստ եերթականության մտցվել են երկու առանձին դասերի մեջ: Միաժամանակ, այս երկա դասերի ներսում նկատվում են որոշակի տարրերություններ, որոնք ընդգրկվել են առանձին խմբերի մեջ: Իրենց եերթին՝ խմբերի մեջ ևս նկատվում են առանձին աարբերություններ, որոնք դաալել են առանձին տիպերի: Դասակարգումը կողավորվել է եռանիշ քվանշանային եամակարգով: Լաաինական քվանշաններով ներկայացված է զալտապատկերի դասը, արաթակսն քվանշաններով՝ եաջոլտարար խումբը և աիպը (զաս– իումը–աիպ):

Թոչնակերպ զարդապատկերները, իրենց աիպերով եանդերձ, բաժանվել են 3 առանձին խմբերի: Խումբ 1–1–ի դասակարգման պարագայում եիմք է ընդունվել քննվող նյութերու կենաց ծառի կամ նմանատիպ զարդապատկերի առկայությունը: Վերջիններս քննատիկ–կարինվածքային առումով որոշակյաբեն աղերսվում են Սինգեչատրի գունագարդ խեցեղենի եամանման օրինակների եեա¹:

Տիպ 1–1–1, աաիաշիշ², (ադյուսակ I, նկ. 8–9): Հայտնաբերվել է Օշականի # 15 քարակլուսին դամբարանից: Չափերը՝ 27.6 x 22 սմ: Տափաշշի դեղին, խնամքով կռկված, չիայեցված մակերեսը երկա կողմից նկարագարոված է կարմիր և մուգ շագանակագույն ներկերով: Մի կալմում պատկերված են 3 եամակենարոն շրջաններ՝ ներգծ-

¹ Շիրակի երկրագիտական քանգարանում պահվում են 2 գունագարդ անոթներ, որոնցից մեկը Կառնուաից է (այժի զարդապատկերով կրատերիսկ) իսկ մյուսը՝ Բենիամինից (քոչնի ե կենդանու զարդապատկերներով տափաշիշ): Վերոհիշյալ նյութերը պատրաստվում են երասարակությամբ, ուստի վերջիններիս քննությանը սույն հողվածում չենք անդադարձել:

² С. К а з н е в, Археологические раскопки в Минтечауре: Альбом куршинных погребений, Баку, 1960, табл. VII, 1, IX, 1; Н. Рзаев, Художественная керамика Кавказской Албании, Баку, 1964, рис. 80, 81, 82, 85, 86.

³ С. Е с а я н, А. К а л а н т а р я н, Ошакан I, Ер., 1988, стр. 61, табл. XLIII, 1, 2.

վզով, հստակ արասեայաված աչքով, կեռ կտուցով, փեարավոր սրչով թռչուն: Թռչնի մոտ պատկերված է նեառվ խոցված սիրտ, որի ծայրը ավարտվում է օղակաձև ելուստով: Անոթի եակառակ կողմում նույն գույներով պատկերված են չորս եամակենարոն շրջաններ, որոնց կենտրոնում նկարված է կենաց ծառ, իսկ նրա աջ և ձախ կողմերում՝ գլուխները ներքև կախած թռչուններ: Թվագրվում է Ջ.Ժ.Ա. II-I դդ.³:

Տիպ I-1-2, Արմավիր (աղյուսակ I, նկ. 3)⁴: Կիսագնդաձև, փոքր-ինչ եասապալա, մոխրագույն միջնաշերտով, թասի թեկոր է: Բաց դարչնագույն մակերեսը գունագարդված է սև և կարմիր գույներով: Կենտրոնում՝ եռանկյունաձև պատկերի գագաթը, նկարված է օձ կամ ճյուղ եիջեցնող զարդապատկեր: Վերջինիս աջ և ձախ կողմերում թռչուններ են: Մեկը խիստ ոճավարձ, մյուսը՝ եավանարար, րադ է: Շուրթը եգերված է սև և կարմիր գույներով արված գոսիանման և ալիքաձև զարդապատկերներով:

Կիսագնդաձև գունագարդ թասերը հանդես են գալիս դեռևս Ջ.Ժ.Ա. III դ. և եարատևում մինչև Ջ.Ժ.Ա. I դ. ներառյալ: Սրանց լսյն տաղածման ժամանակաշրջանը եամընկնում է Ջ.Ժ.Ա. II-I դդ. եեա: Եթե սաավել վաղ օրինակների եամար (Ջ.Ժ.Ա. III-III դ.) եատուկ է պատերի գանգվածեղությունը և վատ թրծված թուխ միջնաշերտի առկայությունը,⁵ ապա Ջ.Ժ.Ա. II-I դդ. օրինակների եամար (Արաաշաա , Բենիամին⁶) եատուկ է պատերի րարակայությունը և լավ թրծվածությունը, ինչպես նաև ներքին և արաաքին րազմերանգ գունագարդումը: Ելնելով Արմավիրի կիսագնդաձև թասի պատերի գանգվածեղությունից, ինչպես նաև վաա թրծված թուխ միջնաշերտի սակայությունից, գունագարդման ձևից, եարդարանքից ու մշակումից՝ վերջինս կարելի է թիսգրել Ջ.Ժ.Ա. III-II դարերով:

Տիպ I-1-3, Բենիամին⁸, (Աղյուսակ I, նկ. 4) Կիսագնդաձև թասի թեկոր: Բեկորի կարմիր փայլեցված մակերեսը գունագարդված է սևով: Կենաց ծառ եիջեցնող զարդապատկերի աջ և ձախ կողմերում պատկերված են երկար վզով, փեարավոր պոչով թռչուններ՝ եավանարար կարապներ: Թռչուններից մեկը դեմքով ուղղված է դեպի կենաց ծառը, իսկ մյուսը՝ դեմքով դեպի աջ: Թվագրվում է Ջ.Ժ.Ա. I դ.⁹:

Խումր I-2 - ի դասակարգման պարագայում եիմք է ընդունվել քննվող նյութերում թռչներամի եորինվածքի սակայությունը: Թռչներամի եորինվածքը հանդիպում է թև՝ փակ, թե՛ բաց աիպի անոթներում՝ գոսեղելով վերջիններիս աարեր մասերը: Վերոեիշյալ եորինվածքը եանդիպում է ուշ փոյուգիական (Ջ.Ժ.Ա. VI-V դդ.)¹⁰, ինչպես նաև վերջինիցս մեծապես ազդված Սամադյի¹¹ (Վրասաան, Ջ.Ժ.Ա. III-II դդ.) գունագարդ խեցեղենում: Ավելացենք, որ թռչներամի եորինվածքը, (եիմնականում ջրային թռչուններ) Հայկական լեռնաշխարեում եայանի է դեռևս միջինրոնգիդարյան խեցեղենից: Ըննվող նյութերից մի քանիսը թե՛ թեմաիկ - եորինվածքային առումով, թե՛ զարդապատկերների պատկերագրության սաանձնաեասկայություններով, զարմանալիորեն ադերտվում են վերջիններիս եեա:

Տիպ I-2-1, աափաշշի թեկոր, Դվին (աղյուսակ I, նկ. 2)¹² Դեղնավուն մակերեսի վրա՝ դարչնագույն և շագանակագույն կամարների միջև, նույն գույներով պատկերված են թռչուններ: Թվագրվում է Ջ.Ժ.Ա. II-I դդ.: Թեմաիկ - եորինվածքային առումով (կամարների միջև պատկերված թռչնագարդը), ինչպես նաև թռչնագարդի, կա-

³ С. Е с а я н, А. К а л а н т а р я н, *նշվ. աշխ., նույնը*:

⁴ Գ. Տ ի ր ա ց յ ա ն, Արմավիրի 1973թ. պեղումների նյութերից, ՊԲՀ, 1974, 3, նկ. 3:

⁵ Դ. Կ ի ր ա լ յ ա ն, Древнеармянская керамика из раскопок Армавира, ИФЖ, 1971, 1, стр. 225.

⁶ Ժ. Խ ա չ ա ր յ ա ն, Արաաշաա II, Եր., 1981, էջ 99-100:

⁷ Հ. Խ ա չ ա ր յ ա ն, Բենիամինի անաիկ դաստակերտի եեղենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մասն II) . ԵՀՀ կենտրոնի Գիտաեան աշխատություններ, հ. 3. Գյումրի, 2000, էջ 33-35:

⁸ Նշվ. աշխ., (մասն I), Գյումրի, 1999, հ. 2, էջ 56, նկ. 9 (3,4):

⁹ Նույնը:

¹⁰ Prayon Friedhelm, Phrygische Plastik, Tubingen, 1987, d. Keramik Kunsthandel.

¹¹ Ю. Г а г о ш е в, Самадло I, Тбилиси, 1982, стр. 75.

¹² Գ. Խ ա չ ա ր յ ա ն, Դվինը անաիկ դարաշրջանում, Եր., 1991, էջ 49, ախա. XIII, 4:

մարների պատկերագրության առանձնահատկություններով հիշեցնում է Վանի թանգարանում պահվող միջինքոնգիդարյան գունագարդ քրեղանի զարդապատկերները¹³:

Տիպ 1-2-2, Օյնօխյա, Թուփրաք – Կադե, (տղյուսակ I, նկ.10)¹⁴ Անոթը թուրքված է զուգահեռ գոտիներով և վերջիններս մեջ պատկերված ջրալին թռչունների զարդապատկերներով: Չևարանոթեն, աղերսվում է Գեդադի IV-III դդ. թվագրվող համանման անոթի հետ¹⁵: Թեմաաիկ – հորինվածքալին առումով (իրանը լուրջորոշ գուգահեռ գոտիների մեջ պատկերված ջրալին թռչուններ), ինչպես նաև զարդապատկերների կաաարողական առանձնահատկություններով դարձյալ ևփշեցնում է միջին քրոնգի դարաշրջանի կարմիր – փանքյան աիսի գունագարդ խեցեղենի կճուճներից մեկի զարդապատկերները¹⁶:

Տիպ I-2-3, Գառնի (աղյուսակ I, նկ.11):¹⁷ Չևը դժվարությամբ է վերականգնվում: Պահպանվել են քարակ պատերով անոթի վզի և ուսամասի հատվածները: Բեկորը թերևս փակ անոթի է սրսականել (սրսիկ կամ ինքք կճուճ): Պատրաստված է լավ հունցված, փոքր-ինչ ավազաիոսեմուրդով կալից: Կարմիր փայլեցված մակերեսը գունագարդված է վիզը ուսից րաժամող գույգ ալիքաճև գծերով: Գծերից ներքև, նույն գույներով պատկերված է երկար վզով, կետանշանով արաահայտված աթուլ, կյուքքով թռչուն՝ հավանաթար քաղ: Մնացած մասը չի սրահպանվել: Թվագրվում է Բ.ժ.ա. II- I դդ.: Ճիշտ է, անոթը րեկորային է, րայց կարելի է ենթադրել, որ գոտերված է եղել թռչներամի հորինվածքով: Թեմաաիկ – եորինվածքալին առումով (ջրալին թռչուն, ինչպես նաև ալիքաճև զարդապատկերներ) աղերսվում է Վանում պահվող միջինքրոնգիսյարյան գունագարդ խեցեղենի կճուճներից մեկի զարդապատկերների հետ¹⁸:

Տիպ I-2-4, ուաիաշիշ, (աղյուսակ I, նկ.7)¹⁹ Հայանարերվել է Եր.Լ.աղալսնի կուսից պեղված Նաիսիկանի Բուրիսիի վերին շերտի դամբարանից: Այն փոքր է, մի կողմը՝ ուուցիկ, մյուսը՝ տափակ (չափերը՝ 18 x 20 սմ): Ուուցիկ մասի վրա սրճագույն, վեցանկյունի մի ասաղ է սրստերված: Ասաղը եգերված է 3 զուգահեռ գծերով, մեջտեղինը՝ սրճագույն, դրսիները՝ մոխրագույն: Սրճագույն նեղ մի գոտի անցնում է անոթի ամենալայն մասով, կանթերի վրայով, շրթերի աակով և վրայով: Գունագարդումը կաաարված է դեղին ֆոնի վրա: Ասաղագարդի առումով վերջինս րաղաավում է Արաաշաաի Բ.ժ.ա. II – I դդ. րվագրվող տափաշշի ասաղագարդին²⁰, իակ թռչնագարդի առումով՝ նույն Արաաշաաի Բ.ժ.ա. I դդ. թվագրվող պնակի պսակի զարդապատկերների հետ: Բ.Կուֆաիիի թեթած գուգահեռները պաաահական և ոչ համողիչ համարելով՝ Գ.Տիրացյանը նշում է. «Տաիաշշի թռչունները հեռավոր կերպով հիշեցնում են Սուգա (Շոշ) քաղաքի 7-6-րդ. դդ. գունագարդ խեցեղենի նույնանման մոաիվները, իակ գունագարդ ասաղը՝ Բ.ժ.ա. 4-2 դդ. թիսգոփաղ խորեգմում պեղված մի ասաիաշշի ոեիեֆ գճերով արված վեցանկյուն ասաղը»²¹: Բուրիսիի աաիաշշի արտաշաայան Բ.ժ.ա. II – I դդ. թվագրվող գուգահեռների և գունագարդման առանձնահատկություններից ելնելով՝ վերջինս կարելի է թվագրել Բ. ժ. ա. II – I դդ.:

¹³ A. Çilingiroğlu, Van Gölm, Ö, II, binyıl çanak çömleği, Ege Üniversitesi, Arkeoloji Dergisi II, 1994, 1-31.

¹⁴ C. Lehmann-Haupt, Materialien zur älteren Geschichte Armeniens and Mesopotamiens, Göttingen, 1907, Taf. VIII, 1.

¹⁵ Г. Тирацян, Культура древней Армении, Ер., 1988, стр. 123; Ժ. Խաչատրյան, Հայաստանում հայտնաբերված գունագարդ մի քանի նմուշներ, ՊԲՀ, Եր., 1966, 1, տիպ. 1/2:

¹⁶ A. Simonian, Pasteurs et chefs de guerre au Bronze Moyen (XXIII – XXII siècles au. J.C.) Arménie; Tresors de l'Arménie ancienne, des origines au IVe siècle, Paris: 54-69, fig. 124.

¹⁷ Կոնկցիոն համարը՝ 2282149:

¹⁸ A. Çilingiroğlu, The second millenium painted pottery tradition of the Van Lake Basin, Anatolian studies, XXXIV, 1984, p. 129-140.

¹⁹ Д. Кухтин, Урартский колумбарий у подношвы Арарата и куроараксинский энеолит, ВМГ, XIII-В, Тбилиси, 1944, стр. 95-96, рис. 52.

²⁰ Z. Kachatrian, Artaxata Capitale dell' Armenia Antica (II sec. A.C.-IV sec D.C.), Al piedi dell' Ararat, Artaxata El' Armenia Ellenistico-Romana, a cura di A. Invernizzi. Torino, 1998, p. 124, fig. 35.

²¹ Գ. Տիրացյան, Հին հայկական գունագարդ խեցեղեն, ԼՀԳ, Եր., 1970, էջ 79, ծանոթ. 43-44:

Տիպ I-2-5 (աղյուսակ I, նկ.12) Արտաշատի VII դդ բլուր²², 8-Յ քառ. խոր. 1մ: Ղարչնագույն, նրբախեցի փոքր պնակի բեկոր է: Ունի դուրս լայնացող, քիչ կտրագծով պսակ, ներքևիված. շեշտված անցումով վիզ: Սակերեսը պատած է դարչնագույն անգորով և թեթև փայլեցված է: Պսակի վրա կարմիրով թռչներամ է պսակերված: Թվագրվում է Ք.ծ.ա. I դ.: Պնակի թռչունների զարդապատկերները, ինչպես վերը նշեցրած, նմանվում են Քուրթեհեի ապիաշշի զարդապատկերներին:

Տիպ I-2-6, Բուղդաշեն (Շիրակ) (աղյուսակ I, նկ.5)²³ Կիսագնդաձև թաս: Սակերեսը դրսից պատված է կարմիր, իսկ ներսից՝ դարչնագույն անգորով: Ներսի դարչնագույն մակերեսը գունազարդված է սևով: Չավերը՝ բարձր. 7.9 սմ, արամ.՝ 14.6 սմ: Պատերը զարդարված են միմյանց զուգահեռ թռչունների երկու շարք երանով: Հատակի ռմավորված պսակերների միացությունից սրանց միջև ընկած դարչնագույն աարածքը սաացել է աստղազարդի տեսք: Թվագրվում է Ք.ծ.ա. II - I դդ.²⁴ Թեմասիկեորինվածքային սառնով աղերովում է Ք.ծ.ա. V-III դդ. քվագրվող Իրանի «արդարիլան» ոճի թասերի զարդապատկերների ետ: Կարելի է թվագրել Ք.ծ.ա. II - I դդ.²⁵:

Տիպ I-2-7, Արմավիր, (աղյուսակ I, նկ.1)²⁶ Տափակ նստուկով կիսագնդաձև, գլխաձև ծորակով թաս է: Չավերը՝ բարձր. 9 սմ, պսակի արամ. 15 սմ, ծորակի պսակաձև մասի երկարությունը՝ 5.5 սմ: Բաց դարչնագույն, լուր փայլեցված մակերեսը դրսից գունազարդված է սև և կարմիր պիքաձև, շղթայաձև, գոտիանման և թռչնակերպ զարդապատկերներով: Թռչունները պսակերված են գծային եղանակով: Կառուցվածքը արված են գծերով, աչքերը՝ կեանքաձևներով: Թռչուններից մեկի աչքը ունի եարցակաձև նշանի ձև: Ելնելով վերոնշյալ կիսագնդաձև թասի նմանապատկեր և եամաժամանակա զուգահեռներից՝ այն կարելի է թվագրել Ք.ծ.ա. II - I դդ.²⁷:

Խուսի I-3 - ի դասակարգման պարագայում հիմք է ընդունվել սրանց մեջ առանձին թռչնազարդի սակայությունը:

Տիպ I-3-1 - ի մեջ (աղյուսակ I, նկ.8) ներառված է Օշականի թռչնազարդ ապիաշշի եակստակ երեսի առանձին թռչնազարդ: Տիպ I-2 - ի մեջ՝ Արաշատի թռչնազարդ ապիաշշի բեկորը (աղյուսակ I, նկ.6)²⁸, որ պատահական գաած է: Բեկորի մուգ սպիտակափսն մակերեսը գունազարդված է սև և կարմիր գույներով: Սակերեսը ունի թեթև փայլեցման եեաքեր: Պատկանված մասի կենարդում սև և կարմիր գույներով պատկերված է կենդանու մարմին եիշեցմու իրանով, երկար, փոքր - ինչ կորացած վզով, եսակ արաաաայաված աչքով, բաց կտուցով, ծաված ռաքերով, երեք գծերով արաաաայաված մագիլներով ռմավորված թռչուն: Պատկերը վերարտադրված է գծաւին եղանակով: Իրանի մի մասը և կրծքավանդակը ընդգծող սրտաձև դեպի վիզն ուղղված զարդապատկերը գունազարդված է կարմիրով, իսկ սրանց սրջա ըսկաժ սանմանում մուգ սպիտակավուն ֆոնը չի գունազարդվել: Վիզը գունազարդված է սևով, գլխը և կաուցը վերարտադրված են գծային եղանակով, աչքն ընդգծված է սև կեանքաձևով: Ոաքերը ամրոջովին սև են: Պատկերը վերևից և ներքևից զարդարված է կարմիր և սև եամակենարոն շրջանների եեաքեր եիշեցմու, վերջիններիս մեջ ներգծված, անփութաբեն արված զիզագաձև և ալիքաձև զարդապատկերներով: Ելնելով բեկորի մակերեսի մշտկման, եարդարման և գունազարդման առանձնատեսակություններից՝ վերջինս կարելի է թվագրել Ք.ծ.ա. I դարով: Բնվող նյութերը թռչունների

²² Կոնկցիոն եամարը՝ 26173:

²³ Ե. Բաբյան, Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը, ՀՍՀՄ պատմության և գրականության ինստիտուտ, «Տեղեկագիր», II, Եր., 1973, էջ 191-192: А. Мартиросян, Аргументы, Ер., 1974, рис. 27.

²⁴ F. Ter-Martirosyan, Coup a' décor peint, p. 212, 193; Armenie; Tresors de l' Armenie ancienne des origines au IVe siecle, Paris, 1994.

²⁵ E. Haeften, Jointed pottery of the Ardabil style in Azerbaijan (Iran), "Iranica Antiqua, Vol. XIII, E. J." Brill, Leiden, 1978, p. p. 75-92; Նույնի՝ La ceramique un Iran pendant la periode parthe, 1983, Gené, p. 124-143, Fig. 20, 1, 2, 3, 4; Г. Наримановичи, Керамика Картли, V-I вв. До. н. э., Тбилиси, 1991, стр. 74.


²⁶ Գ. Տիրացյան, Արմավիրի պեղումները, ԼՀԳ, Եր., 1974, 12, նկ. 3 գ:

²⁷ Ժ. Խաչատրյան, Արաշատ II, Եր., 1981, էջ 99-100:

²⁸ Կոնկցիոն եամարը՝ 296712:

պատկերագրությամբ (գծային եղանակ), ինչպես նաև սրառած և զարդապատկերներով, միմյանց հետ որոշակիորեն աղերսվում են:

Տախտակ 1



Կենդանական զարդապատկերները, իրենց ախպերով եանդերձ րաժանվել են 6 առանձին խմբերի: Խումբ II-1-ի մեջ ներառված են Արմավիրի²⁹ և Արտաշատի եղջերվի զարդապատկերներով գունազարդ կարասների րելքները: Հայկական լեռնախարեում եղջերվի պատկերման ավանդույթները գալիս են ժայռապատկերներից³⁰,

²⁹ Д. А р а к е л я н, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, ИФЖ, 1969, 4, стр. 44-60, табл. IV, I.

³⁰ Հ. Մարտիրոսյան, Ռ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971, նկ. 1, 193-1:

միջինբրոնզեդարյան խեցեղենից³¹ և շարունակվում մինչև միջնադար: Սառն և ակա-
րագրվող զարդապատկերներից մեկը ախպ II-1-1 (Արմավիր) պատկերազրաթյան
գծային եղանակով մոսավոր կերպով եիշեցնում է Արմավիրի՝ Ք.ծ.ա. VI- IV դդ.,
թվագրվող խնկամանի եղջերուների փորագիր զարդապատկերները³², ինչպես նաև՝ ուշ
իդոյուգիական (VI-V դդ.)³³, Սամադույի (Վրաստան)³⁴ գունագարդ խեցեղենի զարդա-
պատկերները, իսկ ախպ II-1-2-ի եղջերվի զարդապատկերը՝ Մինգեչաուրի գունա-
գարդ խեցեղենի եամանման օրինակները³⁵:

Տիպ II-1-1, կարասի բեկոր, Արմավիր (աղյուսակ II, նկ.6)³⁶ Պատրաստված է
լավ եռնցված, քիչ ավազախառնուրդով կավից: Բեկորի բաց դարչնագույն անգործ
պատած մակերեսին կարմիրով պատկերված է եղջերվի զարդապատկեր: Պատկերը
վերարտադրված է գծային եղանակով: Կենդանու անատմիական մանրամասները
չեն տրված: Մակերեսը առի թույլ փայլեցման եեաքեր: Ելնելով բեկորի մշակման ա-
ռանձնահատկություններից՝ վերջինս կարելի է թվագրել Ք.ծ.ա. I դ.:

Տիպ II-1-2, կարասի բեկոր, Արաաշատ 18c քառակուսի, խոր՝ 30 սմ, (աղյուսակ
II, նկ.1)³⁷ Պատրաստված է լավ եռնցված, քիչ ավազախառնուրդով կավից: Բեկորի
մարմնագույն անգործով պատած մակերեսը գունագարդված է սևով և կարմիրով:
Պատկերվել են կենդանու (եավանարար եղջերու) իրանի մի մասի և երկու ոաքերի
եաավածները: Կենդանու ոտքերի աակ սև և կարմիր գույներով պատկերված են շե-
ղանկյաղագաղ, թեք եռանկյունիներ: Թվագրվում է Ք.ծ.ա. I դ.:

Խումբ II-2-ի մեջ ներսաված են Բենիամինի այծերի զարդապատկերներով գու-
նագարդ թասի³⁸, ինչպես նաև Արաաշատի խիստ ոճավորված կենդանու զարդա-
պատկերով աափաշի³⁹ և այծի զարդապատկերով ծորակավոր անոթի⁴⁰ բեկորները:
Պատկերազրաթյան առանձնահատկություններով սրանք նմանվում են Գեղամա լեռնե-
րի ժայռապատկերներին:

Տիպ II-2-1, կլազնդաձև թասի բեկոր, Բենիամին (աղյուսակ II, նկ.8) Բեկորի
կարմիր անգործով պատած մակերեսին սև գույնով պատկերված են այծի զարդապատ-
կերներ: Թվագրվում է Ք.ծ.ա. I դ.: Վերը նկարագրված այծերից մեկի եղջյուրը եակված
է ռուրի իրանը: Հանդիպում են նաև Գեղամա լեռնելի ժայռապատկերներում⁴¹:

Տիպ II-2-2, ծորակավոր անոթի բեկոր, Արաաշատի VII-դ դուր, 1-ի a քառա-
կուսի, խոր՝ 10 սմ: Պատկերվել է անոթի վերին կեսը: Պատրաստված է լավ եռնցված,
քիչ ավազախառնուրդով կավից: Անոթի դարչնագույն անգործով պատած մակերեսը
գունագարդված է կարմիրով: Վերջինս գտնեալությով բաժանված է երկու մասի: Իրանի
վերին եաավածում պատկերված են ծաղիաշղթայաձև, ալիքաձև և շղթայաձև զարդա-
պատկերներ, իսկ սառին մասում՝ պատկերված է ասաիճանաձև եղջյուրներով, փոքր-
ինչ ոճավորված այծի զարդապատկեր: Կանթը գուրդարված է կարմիր ժապա-
վեններով: Մակերեսը թեթև փայլեցված է: Թվագրվում է Ք.ծ.ա. I դ.: Վերը նկարա-
գրված ասաիճանաձև եղջյուրներով այծի զարդապատկերը, զարմանալիորեն, կրկնում
է Գեղամա լեռների եամանման ժայռապատկերները⁴²:

Տիպ II-2-3, աափաշի բեկորներ, Արաաշատի I թըս, 5a քառակուսի, խոր՝ 90
սմ: Պատրաստված է լավ եռնցված, վաքր-ինչ ավազախառնուրդով կավից: Մակե-

³¹ Ա. Քաչաղյան, Ժ. Խաչատրյան, Հնագիտական հաղագրուտ եայանագործու-
թյուններ Սևանի ավազանից, ԼՀԳ, եր., 1969, 4, էջ 75-77:

³² Ի. Կարապետյան, Արմավիրի խեցեղործության մի ոոր տարաեսաե, ԼՀԳ, եր., 1973,
N11, էջ 71, նկ. II, նկ. III, 3:

³³ Prayon Friedhelm, Phrygische Plastik, Tubingen, 1987, d. Keramik Kunsthandel.

³⁴ Ю. Гагониძე, Самалло I, Тбл., 1982, стр. 75.

³⁵ Ի. Բաբայան, նշվ. աշխ., տաբ. VI, քա. 83, 84.

³⁶ Դ. Բաբայան, նշվ. աշխ., տաբ. IV, 5

³⁷ Կոնկրետն եամարը՝ 1972137:

³⁸ Հ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 56, նկ. 9/2:

³⁹ Կոնկրետն եամարը՝ 19721176:

⁴⁰ Կոնկրետն եամարը՝ 197315:

⁴¹ Հ. Մարտիրոսյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, եր., 1981, էջ 121, տխտ. XI:

⁴² Նույնը:

ընտր աչատված է լրաց դարձնագույն անգործով: Գունազարդումը կառավարվել է կարմիրով և շագանակագույնով:

Տախտակ 2



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 10



Նկ. 4



Նկ. 5




Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9

Բեկորներից մեկի վրա պահպանվել են եամակենայտն շրջանների եեաքեր, իսկ մյուսի վրա պահպանված է երկար վզով, եստակ ալտաեայտված աչքով, կեռ, քոչնի կաաց եիչեցնուլ քքով, խիստ ռճավորված կենդանի: Իրանի մասը չի պահպանվել: Կենդանին պահպանված է գծային եղանակով: Վիզը եորիզոնական գծով քաժանված է ելկու մասի: Ստորին մասը զարդարված է եղևնագաղ եիչեցնուլ զարդապահպանով: Իսկ վերինը՝ միմյանց եաջորդող քեք գծերով: Գլխի մասամբ է գանազարդվել: Աչքը պահպանված է դարչնագույն կիսաշրջանի մեջ ներառված կարմիր կեանանշանով: Զքի պահպանված մասը եուշում է, որ վերջինս պատկերված է եղել գծային եղանակով:

Եղբայրները առտիճանաձև են և եիշեցնում են Գեղսմա լեռների այծերի եամանման ժայռապատկերները: Թվագրվում է Բ.ժ.ա. I դ.:

Տիպ II-3-1, Օյնոխայա, Պատմոց (աղյուսակ II, նկ.2)⁴³ Պատկերվում է Աղսնայր քանդաքանում: Հավանաբար բերվել է Պատմոցից: Տափակ նստուկով, ուռուցիկ, ձգված իրանով, գլանաձև վզով, երեքնուկսձև պատկով (ծորակի մասը կտրավում), պատկից ներքև սկսվող և ուսերին միացող, սատրին մասում փոքր-ինչ ակնաված, ապակ կանթով օյնոխայա է: Չավերը բարձր. 32 սմ, արամ. 24.5 սմ, նստուկի արամ. 11 սմ: Ունի բաց դարչնագույն իհայլեցված մակերես: Անոթի վերին մասը բաժանված է 4 մուգ դարչնագույն գազանեղ գոտիներով, որոնցից վերին երկուսի մեջ կան երկշեղ գծեր, միջին երկուսի մեջ՝ իրար գուգանեղ ալիքաձև գծեր, սատրին երկուսի մեջ՝ շղթայաձև զարդասյառակներ: Անոթի կենտրոնում՝ սև ֆոնի վրա, մուգ դարչնագույնով նկարված է շարժման մեջ գանվող, դեպի աջ ուղղված, ոտքերը առաջ պարզած սայուծի պատկեր: Առյուծի աջ և ձախ կողմերում պատկերված են երեքակն եռանկյունիներ, որոնցից ամեն մեկի մեջ ներգծված են սևով և դարչնագույնով արված եռանկյունիներ:

Հայկական լեռնաշխարհում առյուծի զարդասյառակներն հանդիպում են միջին բրոնզի դարաշրջանում (ուկե գավաթ, Կիրովական)⁴⁴, ուրարաական որմնակարներին⁴⁵. Հենց նույն Պատմոցի եռանկյունաձև շերտից (թվագրվում է վաղ հայկական կամ հելլենիստական ժամանակաշրջանով) հայտնաբերվել է առյուծի պատկերով գունագարդ կենդանակերպ անոթ⁴⁶: Պատմոցի օյնոխայայի զարդասյառակները աղերս ունի զարգացած վոյսգիական ոճի անոթներից մեկում պատկերված առյուծի զարդասյառակների հետ⁴⁷:

Տիպ II-4-1, Օյնոխայա, Պատմոց, (աղյուսակ II, նկ.3) Պատկերվում է Աղսնայր քանդաքանում: Հավանաբար բերվել է Պատմոցից⁴⁸: Տափակ նստուկով, գլանաձև վզով, ուռուցիկ, ձգված իրանով, երեքնուկսձև պատկով (ծորակի մասը կտրավում), պատկից սկսվող և ուսերին միացող, սատրին մասում փոքր - ինչ ակնաված, ապակ կանթով օյնոխայա է: Անոթի վիզը՝ բաց դեղնավուն է, իրանը մուգ դարչնագույն: Անոթի վերին մասը բաժանված է 4 կարմրավուն իլալ գուգանեղ գոտիներով, որոնցից վերին երկուսի մեջ՝ սևով ներգծված են երկշեղ գծեր, միջին երկուսի մեջ՝ գուգանեղ ալիքաձև գծեր, իսկ սատրին երկուսի մեջ արարական երեք թվանշանը եիշեցնող, եավանաբար թռչներում խալեղանշալ, իրար գուգանեղ երեք շարք զարդասյառակներով: Դրանցից մեկը կարմիր է, իսկ մյուսները՝ սև: Անոթի կենտրոնում կարմիր գույնով նկարված է գլանաձև պատկանդանին երկայնակի նստած քարայծի պատկեր: Վերջինիս կուլքին պատկերված է բուսագարդ: Քարայծի աջ և ձախ կողմերում պատկերված են գազաթները դեպի ներքև ուղղած եռանկյունիներ: Հրաաարակող ենագետի կարծիքով, վերոհիշյալ օյնոխայաները համարվում են ուրարաական: Սակայն, սրանք, իրենց ձևաթանական որոշ առանձնահատկություններով ուարրերվում են ուրարաական մնանաաիպ անոթներից: Օյնոխայաների կտրավում ծորակները Գ.Տիրացյանի կարծիքով եիշեցնում են վերջիններիս հունական նախաաիպերը,⁴⁹ իսկ իրանի ձգվածությամբ ավելի շատ նմանվում են վաղ հայկական ձևերին: Ինչ վերաբերում է օյնոխայաների գունազարդմանը, ապա պետք է նշել, որ մինչ այժմ ուրարաական գունագարդ խեցեղենի գոյության հարցը մնում է չպարզված: Ուսանասիրողների մի մասի կարծիքով վերջինիս գոյության շրջանը համընկնում է ուրարաական պետության կազմավորման վուլի հետ, իսկ հաջորդ շրջանում այս աարածաշրջանի համար բնորոշ է կարմիր փայ-

⁴³ O. Tasyurek, *Urartian Polychrome pottery in the Adana Regional Museum, Turk Arkeoloji Desgisi XXVI 1*, 1977, p. 182-183.

⁴⁴ A. М а р т и р о с я н, *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ер., 1964, рис.

⁴⁵ Կ. Հ լ ի հ ա ճ ի ս յ ա ն, *Էրերունիի որմնակարները*, Եր., 1975, աղ. 45:

⁴⁶ Б. Т и р а ц я н, *Новые археологические материалы послеурартского времени на территории западной Армении (Турция) и их место в истории древнеармянской культуры, Древний Восток*, Ер., 1976, 2, стр. 148.

⁴⁷ E. A k u r g a l, *Die Kunst anatoliens, von Homer bis Alexander*, Berlin, 1960, p. 83, 84 pl. 50

⁴⁸ O. T a z y r e k, *նշվ. աշխ.*, էջ 182. նկ. 2:

⁴⁹ Գ. Տ ի Ր ա ճ յ ա ն, *Արմավիրի պեղումները*, ԼՀԳ, Եր., 1974, 12, էջ 61:

լեցված խեցեղենը⁵⁰: Մյուսների կարծիքով գունագաղղ խեցեղենը շարունակում է իր գոյությունը նաև աշ ուրարական ժամանակաշրջանում: Այս ենթադրության եմ-նական կոփումը Կարմիր թուրում եայանաբերված գունագաղղ ասկն է⁵¹, սակայն վեր-ջինս հավանաբար վոյուցիական ներմուծման արդյունք է⁵²: Վերոհիշյալ տարակար-ծությունների հիմնական սրտածաղը Վանա լճի ավազանի ենագիսական եռշարժան-ների շերտագրական իրավիճակն է և պակաս ուսումնասիրված լինելը: Այստեղ գունա-գաղղ խեցեղենը շերտագրորեն նախորդում է կարմիր փայլեցված խեցեղենին (Վա-նում նյութը հայտնաբերվել է լանջին թափված շերտից, որը կարող էր շվտթությունների տեղիք ապա): Ենթադրվում է, որ գունագաղղ խեցեղենը արաադովել է տեղական ցեղե-րի կողմից, իսկ ուրարականների նվաճման հեռանքով մղվել է երկուրդ պլան՝ իր տեղը զիջելով կարմիր փայլեցված խեցեղենին: Ուրարաուի անկումից հետո այս ցեղե-րի տեղաշարժերի ետևանքով գունագաղղ խեցեղենը լայն տարածում է ստանում Հայկական լեռնաշխարհում⁵³: Գունագաղղման առանձնահատկություններով (զա-գաթները դեպի ներքև ուղղված եռանկյունիներ, գուգանեռ գուսիներ, ալիքաձև և շղթա-յաձև զարդապատկերներ) օյնոխյանների զարդապատկերները թարրապատկեր են ելլե-նիստական Հայաստանի գունագաղղ խեցեղենի զարդապատկերների հետ: Իսկ ինչ վերաբերում է օյնոխյաններից մեկի առյուծի զարդապատկերին, ինարկե վերջինս եանդիպում է արարական որմնանկարչաթյան մեջ⁵⁴, սակայն ենեց նույն Պուանոցի եետուրարական շերտից (թվագրվում է վաղ եայկական կում ավելի շատ եելե-նիստական դարաշրջանով), որից եավանաբաթ ծագում են վերոհիշյալ օյնոխյանները, եայտնաբերվել է առյուծի պատկերով գունագաղղ կենդանակերպ անոթ⁵⁵:

Տիպ II- 5-1, մեծ անոթի թեկոր, Արաաշաա⁵⁶, 12ե քստակուսի, խոր. 2 մ, (աղ-յուսակ II, նկ.9) Ձեր դժվար է վերականգնել: Պաարառոված է լալ եունցված, վտքը-ինչ ավագախստնուրով կավից: Պաեպունված մաուի րաց դեղնավուն մակերեսին, մուգ շագանակագույնով պատկերված են կենդանու, եալանաբար՝ ձիա ոտքեր: Մնա-ցած մասը չի պաեպանվել: Ոտքերից մեկը ամրոդջական է, մյուսը՝ թերի, վերաբուա-դրված են գծային եղանակով: Հաշվի են առնվել կենդանու անատոմիական առանձ-նահատկությունները: Հսաակ արաաեայալված են ագորը, ծունկը, թույլ սմբակը: Ունի թերի փայլեցված մակերես: Թվագրվում է Զ.ծ.ա. II- I դդ.: Պաեք է նշել, որ ձիա զար-դապատկերներ հանդիպում են Թեվե-Միալ Բ շերտի⁵⁷, ուշ վոյուգիական խեցեղե-նի⁵⁸, Սամադդոյի⁵⁹ գունագաղղ անոթներում: Ավելացենք, որ ձիա կենդանակերպ անոթներ եայանաբերվել են Արմավիրից⁶⁰, Եիրուկավանից⁶¹ և Բենիամինից⁶²:

Խումր II-6- ի մեջ ներառված են այն զարդապատկերները, որոնք զոնե մեգ եայտնի նյութերում չունեն իրենց մտաավոր գուգանեռները:

Տիպ II- 6-1, կճուճի թեկոր, Դվին (աղյուսակ II, նկ.4)⁶³ Տավակ, եարթ եատակով, ուսուցիկ իրանով, կարճ վզով, դուրս եակված պատակով կճուճ է: Վարդագույն մակե-

⁵⁰ Б. П и о т р о в с к и й, Ванское Царство, М., 1959, стр. 108; Г. Тирация, О рас-писной керамике..., стр. 271-272.

⁵¹ Г. Т и р а ц я н, նշվ. աշխ., էջ 271-272:

⁵² Ф. Т е р- М а р т и р о с о в, О происхождение расписной керамики древней Армении, ИФЖ, 1974, 1, стр. 65.

⁵³ Ф. Т е р- М а р т и р о с о в, նշվ. աշխ., էջ 67:

⁵⁴ Կ. Հ ո վ հ ա ն ճ ի յ ա ն, Երեբունիի որմնանկարները, Եր., 1975, աղ. 46:

⁵⁵ Б. Т и р а ц я н, Новые археологические материалы..., стр. 148.

⁵⁶ Կոլեկցիոն համարը՝ 1973/11:

⁵⁷ N. M e d v e d s k a y a, K study on the chronologic parallels between the geometric tige and Sialk B painted pottery "Iranica Antiqua, vol XXII, Gent, 1986, p. 89-120, pl II-A, pl. XII-2.

⁵⁸ P r a y o n F r i e d h e l m, Phrygische Plastik, Tübingen, 1987, d. Keramik Kunsthandel.

⁵⁹ Ю. Г а г о ш и д з е, Самадло I, Тбилиси, 1982, стр. 75.

⁶⁰ Գ. Տ ի Ր ա ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 61:

⁶¹ Ф. Т е р- М а р т и р о с о в, Раскопки поселения и некрополя античного Пиракавана, ԵՀՀ կենտրոնի Գիտական աշխատություններ, Գյումրի, 1988, հ. 1, էջ 21-22:

⁶² Հ. Խ ա չ ա տ Ր յ ա ն, նշվ. աշխ., ախտ. I, նկ. 5:

⁶³ Գ. Զ ո չ ա Ր յ ա ն, նշվ. աշխ., ախտ. XV-7, XXIII-8:

րեսին կարմիր գույնով նկարված են եղջերավոր կենդանիների (մեկը ու ամբողջական) ռճավորված պատկերներ: Թվագրվում է Ք.ծ.ա. II- I դդ.:

Խումբ II-6-2, բեկոր, Արմավիր, (աղյուսակ II, նկ. 7)⁶⁴ Չեղ չի վերականգնվում: Բեկորի մակերեսին պատկերված է ռճավորված կենդանի: Թվագրվում է Ք.ծ.ա. III- I դդ.:

Ինչ վերաբերում է քննվող նյութերի գումագարդան առանձնահատկություններին, ապա վերջիններս ներկայացված են թե՛ միագույն և թե՛ բազմագույն օրինակներով: Միագույն օրինակների դեպքում կարմիր դաշաի վրա նկարագարողումը կատարված է սևով, դարչնագույն դաշաի վրա՝ սև և կարմիր գույներով, դեղնավունի դեպքում՝ մուգ շագանակագույնով, վարդագույնի պարագայում՝ կարմիրով:

Բազմագույն գումագարդան ժամանակ օգտագործվել է ռավակումին ետրոսա ներկալման: Դարչնագույն դաշաի վրա մախշագարդումը կատարված է սրճագույն և կարմիր, կտրմիր և շագանակագույն, մուգ դարչնագույն և սև, կարմիր և սև գույներով: դեղին դաշտի վրա գումագարդումը կատարված է կարմիր և մուգ շագանակագույն, դարչնագույն և մոխրագույն, դարչնագույն և շագանակագույն ելանգներով: Սալիտակ դաշաի գումագարդումը կատարված է սև և կարմիր գույներով:

Կենդանական զարդապատկերների վերլուծությունը ցույց է ապիս, որ սրանցից շատերը թե՛ թեմատիկ – ետրինվածքային առումով, թե՛ պատկերագրությամբ, ինչպես նաև գումագարդամբ (կարմիր ֆոնի վրա սևով գումագարդում) մնանվում են միջին բրոնզիդարյան գումագարդ խեցեղենի զարդապատկերներին:

Վերոնիշյալ մամուլությունները (երկրաչափական զարդապատկերների առումով) վաղուց նկատվել են գումագարդ խեցեղենի այլ ուսումնասիրողների կողմից: Վերջիններիս միջև ծագումնաբանական կապերի ետրցում տեսակետները էապես տարբերվում են միմյանցից⁶⁵: Իհարկե, դժվար է ապացուցել այս ելույթների ուղղակի կապվածությունը, սակայն պատկերագրությամբ Գեղումա լեռների ժայռապատկերներին մնանվող մի շարք զարդապատկերներ կարող են քննարկվող նյութերի տեղական խորք արմատների օգտին իստել:

Կենդանական զարդապատկերներում նկատվող մյուս եեաաքրքիր առանձնահատկությունը կենդանիների պատկերագրությունը գծային եղսնակն է: Նշենք, որ վերջինս եայտնի է դեռևս վաղ եայկական ժամանակաշրջանից⁶⁶: Շաա ենարավոր է, որ եելենիսաական ժամանակաշրջանում աեղի է ունեցել անցում՝ գծային վտրագիր եղանակից դեպի գումագարդ գծային եղանակը: Ավելացենք, որ կենդանիների պատկերագրության գծային եղանակը ուշ փոյուգիական խեցեղենի, ինչպես նաև փոյուգիական խեցեղենի ուվելի վաղ ձևերի աուրածված միջոցներից մեկն էր⁶⁷: Շաա ենարավոր է, որ քննվող նյութերը ագղված լինեն ուշ փոյուգիական ձևերից, քանի որ մնան երևույթ նկատվում է Սամաղլոյի⁶⁸ եամաժամանակյա գումագարդ խեցեղենում:

Ինչ վերաբերում է կենդանական զարդապատկերներով գումագարդ խեցեղենի ֆունկցիոնալ նշանակությանը, ապա եինք ընգունելով Ֆոյլերի և Արժիմբալի կողմից առաջադրված կենդանակերղ անոթների պաշաամուըքային նշանակության մասին վարկածը, կարծիք է եայտնվել, որ վելլիններիս մնան կենդանական զարդապատկերներով գումագարդ անոթները ևա ունեցել են սաշաամուըքային նշանակություն⁶⁹: Ընդ որում, պատկերված կենդանիներից շատերը եին եավաաալիքներում խորերդանշել են աարբեր աստվածություններ: Սեր կարծիքով քննվող զարդապատկերների մի մասը կոսպված են եղել լուսնի, իսկ մյուս մասը՝ արլի պաշաամուըքային ցիկլերի եեա: Հին

⁶⁴ Б. Тирацян, О расписной ..., табл. III, 6.

⁶⁵ Б. Тирацян, *նշվ. աշխ.*; Ժ. Խաչատրյան, *Հայաստանում եայանարերված..., էք 259*: Փ. Тер-Мартиросов, *նշվ. աշխ.*; Դ. Аракелян, *Очерки по истории искусства древней Армении, Ер., 1976, стр. 71.*

⁶⁶ Դ. Чаршакян, *Արմավիրի խեցեղործության մի նոր տարահասակ, ԼՀԳ, Եր., 1973, 11, էք 71, նկ. I; III/3:*

⁶⁷ Prayon Friedhelm, *Phrygische Plastik, Tübingen, 1987, d. Keramik Kunsthandel.*

⁶⁸ Ю. Гагшадзе, *Самадо I, Тбилиси, 1982, стр. 75.*

⁶⁹ Փ. Тер-Мартиросов, *Керамика эллинистической Армении как исторический источник, рукопись кандидатской диссертации, Ер., 1984, стр. 45.*

հավատալիքներում պտղաբերությունը և, ընդհանրապես, կյանքը կախված են եամարվել ջերմությունից և խոնավությունից: Ընդ որում ջերմությունը ճանաչվում էր, որպես արական նախակիզը, իսկ խոնավությունը՝ իգական: Ջերմության սպրյուր եամարվում էր արևը, իսկ խոնավությանը՝ լուսինը⁷⁰: Հայանի է, որ կենդանիներից առյուծը, ձիւն⁷¹, ինչպես նաև բոշոմներից ագոսվը և աքաղաղը կատված են եզել արևի, իսկ եղջերուն, այծը, քալայծը⁷² և ջրային շատ բոշոմներ՝ լուսնի պաշտամունքային ցիկլերի հետ: Ամենայն հավանականությամբ, քննվող նյութերի գալստապատկերները մի մասը կապված են եղել լուսնի պաշտամունքային ցիկլի հետ (եղջերու (ախա II-I-1, II-I-2, եղջերավոր կենդանիներ(ախա I-2-3, II-6-1, այծեր (ախա II-2-1, II-2-2), բոշոմներ և ալիքած կարդասրսակելներ⁷³, (ախա I-2-7), սրտած կարդասրսակելներ (կտես), որոնք կապված են կունացի նախակերի հետ (ախա I-3-2, I-1-1, I-3-1), ջրային բոշոմներ (ախա I-2-3):

Վերոնիշյալ նյութերի մյուս մասն էլ խորհրդանշում է արևի պաշտամունքային ցիկլերը (ասյուծ(ախա II-3-1 ձի(ախա II-5-1), աստղագաղղի շուրջ պատկերված բոշոմներ (ախա I-2-6, I-2-5, ինչպես նաև ախա I-2-1(գաղղապատկերի վերականգնման դեպքում կատացվի աստղագաղղի շուրջ պատկերված բոշոմներ)):

Ինչ վերաբերում է կենդանական գաղղապատկերների պաշտամունքային ասրերին, ապա ստումնասիրողների կարծիքով պատկերագրության ժամանակ ընդգծվել են դրանց սրբազան եամարվող կետերը: Այդպիսիք են եամարվել կենդանիների եղջյարների և սրանց միջև ընկած ասրածքի, ինչպես նաև մեջքի եատվածները: Այս երևույթը նկատվում է նաև վերոնիշյալ գաղղապատկերների պատկերագրության մեջ. աստիճանած եղջյուրների պատկերագրություն, քարայծի մեջքից աճող բուսագաղղ, որոնք կապված են եղել մեռնող և ետադրյուն առնող լուսնի գաղղապատկերի հետ⁷⁴:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի կենդանական գաղղապատկերներով գունագաղղ խեցեղենը արժեքավոր է ոչ միայն գեղարվեստական անսանկյունից: Վերոնիշյալ ժամանակաշրջանի եզելու և նյութական մշակույթի ասումնասիրման բնագավառում այն կարող է ամենալ ստրյուրազիական մեծ նշանակություն:

ЗООМОРФНЫЕ ОРНАМЕНТЫ РАСПИСНОЙ КЕРАМИКИ ЭЛЛИНИСТИЧЕСКОЙ АРМЕНИИ

Резюме

А. Нахшарян

Зооморфные орнаменты расписной керамики эллинистической Армении практически не были изучены. В статье дана попытка классификации зооморфных орнаментов расписной керамики. Рассмотрены некоторые особенности росписи, взаимосвязь геометрических и растительных орнаментов с зооморфными. Выяснены некоторые вопросы функционального назначения расписной керамики с зооморфным орнаментом.

⁷⁰ Ա. Արաքելյան, *Օտերկի քո...*, ժր. 48.

⁷¹ Նույնը:

⁷² Նույնը:

⁷³ Ա. Ղեմիքիսյան, *Կենդանակերպ պատկերների սրբազան եամարվող կեանքի մասին, Երիասարդ գիտնականների կոնֆերանս՝ նվիրված Վ. Լենինի ծննդյան 110-ամյակին, գեկուցումների թեզիսներ, Եր., 1980, էջ 39:*

⁷⁴ Նույնը: